Հիշելով տատիկի հետ

Ինչո՞ւ Մարին ավելի համբերատար չէր տատիկի հետ:



Ջեյն Մաքբրայդ
(Հիմնված է իրական պատմության վրա)

Մարին մռայլվեց: Տատիկը պատմում էր նույն պատմությունը: Կրկին:

Մի քանի ամիս առաջ տատիկը եկել էր ապրելու Մարիի ընտանիքի հետ: Մարին սիրում էր նրան, սակայն երբեմն հոգնեցուցիչ էր տատիկի հետ լինելը: Նա կրկին ու կրկին պատմում էր նույն պատմությունները: Երբեմն, առանց ավարտին հասնելու, նա սկսում էր նորից պատմել նույն պատմությունը:

Մարին հոգոց էր հանում: «Տատիկ,- ասում էր նա,- դու արդեն պատմել ես ինձ այդ պատմությունը»:

Տատիկը խոնարհում էր հայացքը: «Իսկապե՞ս»:

«Այո»,- ասում էր Մարին: «Դու դա պատմեցիր ինձ մի քանի րոպե առաջ»:

«Չեմ հիշում», - ասում էր տատիկը: Նա տխուր և շփոթված տեսք ուներ: Ապա նա կանգնում էր և դանդաղ քայլերով վերադառնում էր իր սենյակը:

Մարին իրեն վատ էր զգում, որ նեղացրել էր տատիկին: Պապիկի մահից հետո տատիկի հիշողությունը գնալով վատանում էր: Մի անգամ նա նույնիսկ մոռացել էր անջատել գազօջախը, որի պատճառով հրդեհ էր սկսվել խոհանոցում: Այդ ժամանակ էր, որ մայրիկն ու հայրիկը տատիկին բերեցին ապրելու իրենց հետ:

Մարին խոհանոցում հանդիպեց հայրիկին: «Ես իսկապես սիրում եմ տատիկին, բայց հոգնում եմ նույն պատմությունները լսելուց: Ինչո՞ւ նա չի հիշում, որ արդեն պատմել է ինձ այդ պատմությունը մոտ հիսուն միլիոն անգամ»:

Հայրը ժպտաց: «Համոզված եմ, որ հիսուն *միլիոն* անգամ չէ: Սակայն գիտեմ, որ դժվար է: Տատիկը հիվանդություն ունի ուղեղում, որի պատճառով մոռանում է շատ բաներ: Նա իր պատմությունների միջոցով փորձում է հիշել, թե ով է ինքը»:

Մարին կախեց գլուխը: Նա ինչո՞ւ ավելի համբերատար չէր տատիկի հետ: Տատիկը միշտ սիրալիր է եղել իր հանդեպ: Նա կոչում էր նրան «իմ Մարի»: Մարին մտաբերեց այն օրերը, երբ օգնում էր տատիկին ծաղիկներ տնկել և մաքրել պարտեզը մոլախոտերից:

Մարին թակեց տատիկի դուռը:

«Ներս եկեք», - ասաց տատիկը:

Մարին բացեց դուռը: Տատիկը նստած էր աթոռին՝ սուրբ գրությունները ծնկներին:

«Տատի՛կ, պատմիր խնդրեմ, թե դու և պապիկը ինչպես միացաք Եկեղեցուն»,- խնդրեց Մարին:

Տատիկը վեր նայեց: «Դու ուզում ես լսել իմ ու պապիկի մասի՞ն»,- հարցրեց նա հույսով լի ձայնով:

Մարին նստեց տատիկի կողքին: «Այո: Ես ուզում եմ լսել ամեն ինչ»: Մարին բռնեց տատիկի ձեռքը: «Դու շատ յուրահատուկ տեղ ունես իմ կյանքում, տատիկ: Եվ դա միշտ այդպես կլինի»:

Տատիկը ժպտաց, հենվեց աթոռին և սկսեց պատմել պատմությունը:

Մարին շատ անգամներ էր լսել այդ պատմությունը, սակայն այս անգամ դա նրան չէր նյարդայնացնում կամ ձանձրացնում: Փոխարենը նա սեր ու հիացմունք էր զգում: Նա գիտեր, որ տատիկն ու պապիկը մեծ զոհաբերություններ էին կատարել, երբ Գերմանիայում միացել էին Եկեղեցուն: Նրանք տեղափոխվել էին իրենց տնից շատ հեռու, որպեսզի կարողանային մոտ ապրել Եկեղեցու անդամներին:

Տատիկն ավարտեց պատմությունը և ժպտաց: «Դու լավ աղջիկ ես, իմ Մարի»:

Մարին գրկեց իր տատիկին: «Շնորհակալություն, տատիկ: Ես սիրում եմ քեզ»: ●

Այս պատմությունը տեղի է ունեցել ԱՄՆ-ում:

ՆԿԱՐԸ՝ ՄԵԼԻՍԱ ՄԱՆՎԻԼ